ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ԳԻՏԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

## ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ




Պրակ I

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ 2016

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ԳԻՏԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
(*հոդվածների ժողովածու*)

# SCIENTIFIC READINGS
(*collection of articles*)

# НАУЧНЫЕ ЧТЕНИЯ
(*сборник статей*)

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ 25

1991-2016

**I**

Ստեփանակերտ 2016

ՀՏԴ 001
ԳՄԴ 72
Գ 602

# Արցախի անկախության հռչակման 25-րդ տարեդարձին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր

*Տպագրվում է Արցախի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ*

***Գիտաժողովի խորհուրդ***

*Մ.Մինասյան – ԱրՊՀ ռեկտոր*

*Վ. Ավանեսյան- ԱրՊՀ պրոռեկտոր*

*Ա. Սարգսյան – ԼՂՀ ԿԳՄ փոխնախարար*

*Վ. Յարամիշյան - ԱրՊՀ պրոռեկտոր*

*Գ. Սահակյան - ԱրՊՀ պրոռեկտոր*

*Ա. Առստամյան – ԱրՊՀ դեկան*

*Ռ. Մանգասարյան – ԱրՊՀ դեկան*

*Է. Հայրապետյան – ԱրՊՀ դեկան*

*Շ. Այդինյան – ԱրՊՀ դեկան*

*Վ. Միրզոյան – ԱրՊՀ դեկան*

*Ա. Ալեքսանյան – ԱրՊՀ ամբիոնի վարիչ*

*Ա. Խաչատրյան - ԱրՊՀ ամբիոնի վարիչ*

*Ս. Խանյան բ.գ.դ., պրոֆեսոր*

Գիտական ընթերցումներ: Հոդվածների ժողովածու.-
Գ 602 Ստեփանակերտ: ԱրՊՀ հրատ., 2017.- 290 էջ:

ՀՏԴ 001
ԳՄԴ 72

ISBN 978-9939-1-0529-1

© ԱրՊՀ հրատ., 2017

*ՀՏԴ 902(479.243)* *Պատմություն*

*Ինեսա Կարապետյան,*
*Արմինե Գաբրիելյան,*
*ՀՀ ԳԱԱ ՀԱԻ*

## *ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԽԵՑԵՂԵՆԸ*
## *(Արցախ, Տիգրանակերտ, ներմուծում, խեցեղեն, Տիգրան Մեծ, անտիկ դարաշրջան, առևտուր, մշակութային կապեր)*

*Հոդվածում ներկայացվում և գիտական շրջանառության մեջ է դրվում Արցախի Տիգրանակերտի տասնամյա պեղումներով ի հայտ եկած ներմուծված անտիկ խեցեղենի մի ոչ մեծ խումբ՝ կազմված ամֆորաների, օլպիոսի, ունգկվենտարիների, կանթարոսի, խնկարկման անոթի, տերրակոտաների բեկորներներից:Այս անոթների ձևերի վերականգնումը իրականացվել է Հայաստանի և հելլենիստական աշխարհի մյուս հնագիտական շատ հուշարձանների, բավարար ուսումնասիրված և ճշգրիտ թվագրված, ներմուծված խեցեղենի հետ համադրման մեթոդով: Ներմուծված նյութերը խոսում են քաղաքի բնակչության հելլենիստական մշակույթի բոլոր կողմերին լավատեղյակ և հաղորդակից լինելու մասին: Տիգրանակերտի ներմուծումը կապում ենք Հայաստանի ավանդական գործընկերներ Փոքր Ասիայի, Հոնիայի, Միջագետքի, Հյուսիսմերձսևծովյան արտադրական կենտրոնների հետ, որոնց հետ առևտրի ծավալը մ. թ. ա 1-ին – մ.թ. 1-ին դարերում ընդլայնվեց՝ պայմանավորված Տիգրան Մեծի լայնածավալ պետության ստեղծման և արևելքում առևտրաքաղաքական միջնորդ դառնալու հետ:*

***Բանալի բառեր*** *– Արցախ, Տիգրանակերտ, ներմուծում, խեցեղեն, Տիգրան Մեծ, անտիկ դարաշրջան, առևտուր, մշակութային կապեր:*

***Инеса Карапетян***
***Армине Габриелян***
***Институт археологии и этнографии НАН РА***

## *ИМПОРТНАЯ КЕРАМИКА ИЗ АРЦАХСКОГО ТИГРАНАКЕРТА*

*В статье представлена и введена в научный оборот небольшая группа импортированной античной керамики, выявленная в результате десятилетних раскопок Арцахского Тигранакерта. Данная группа состоит из фрагментов амфор, олпия, унгвентариумов, канфара, кадильницы а также фрагментов терракот. Реконструкция форм этих сосудов была произведена методом сопоставления с достаточно изученной и точно датированной импортированной керамикой из многих других археологических памятников Армении и эллинистического мира.*

*Импортные материалы свидетельствуют о том, что городское население Тигранакерта было хорошо знакомо со всеми сторонами эллинистической культуры и было причастно к ней. Импорт Тигранакерта связывается с производственными центрами Малой Азии, Ионии, Месопотамии, Северного Причерноморья, являющимися традиционными партнерами Армении. объем торговли с этими производственными центрами увеличивается в I в. до н.э. – I в. н.э., обусловленное созданием Тиграном Великим огромного государства ставшего торгово-политическим посредником на Востоке.*

*Ключевые слова: Арцах Тигранакерт, импорт, керамика, Тигран Великий, эпоха античности, торговля, культурные связи.*

***Inesa Karapetyan***
***Armine Gabrielyan***
***Institute of Archaeology and ethnography NAS RA***

## *IMPORTED CERAMICS OF TIGRANAKERT IN ARTSAKH*

*The article presents and puts into scientific circulation a small group of imported Hellenistic ceramics that was unearthed in result of ten-year excavations at Tigranakert in Artsakh. This group of ceramics includes the fragments of amphorae, olpie, unguentaria, kantharos, thurible end fragments of terracotta. The vessel shapes were reconstructed based on the comparison with the sufficiently studied and precisely dated imported ceramics from many other archaeological sites in Armenia and the Hellenistic world.*

*Imported materials reveal that town population was well acquainted with all aspects of the Hellenistic culture and was art and part in it. Imported items of Tigranakert are connected with production centers in Asia Minor, Ionia, Mesopotamia, northern coastal area of the Black sea, which were traditional partners of Armenia. Volume of sales with these centers increased due to creation of a vast state in I c. BC – I c. AD that became a trade-political intermediary in the east.*

**Keywords:Artsakh,Tigranakert, import,ceramics,Tigran the Great, the age of antiquity,trade,cultural connections**

Տիգրանակերտի տասնամյա պեղումներով ձեռք բերված նյութերի մեջ առանձնացվել է ներմուծված անտիկ խեցեղենի մի ոչ մեծ խումբ: Նորահայտ նյութերը խիստ բեկորային են, բայց ներկայացնում են հելլենիստական շատ հուշարձանների բավարար ուսումնասիրված և ճշգրիտ թվագրվող տեսակները, ուստի այս խմբի քննությունը, ձևերի տիպաբանական վերականգնումը և ժամանակագրական դասակարգումը կօգնի Արցախի

Տիգրանակերտի տնտեսական, առևտրական, մշակութային կապերի վերհանման, քաղաքային թաղամասերի առաջացման, գոյատևման, բնակեցման ժամանակահատվածի ճշտգրման գործընթացին:

Ներմուծված խումբը կազմված է ամֆորաների, օլպիս-սափորի, ունգվեն-տարիների, կանթարոսի, խնկարկման անոթի, թրծակավային արձանիկ-տերրակոտաների բեկորներներից, որոնց ձևերը վերականգնվում են Հայաստանի և հելլենիստական աշխարհի մյուս հնագիտական շատ հուշարձանների հայտնաբերված լավ ուսումնասիրված և ճշգրիտ թվագրվող խեցեղենի համադրության միջոցով:

**Ամֆորաների** բեկորները երկուսն են: Առաջինը ողջ իրանը հորիզոնական մատնեքավոր գոտիներով ձևավորած ոչ մեծ , նրբախեցի անոթի է պատկանում (բեկորի h=55 սմ, լայն. 43 սմ, խեցու հաստ. 3-4 մմ, մատնեքների հեռավորություն 5-9 մմ): Այն գտնվել է քաղաքային Առաջին թաղամասի (93Mi քառ.) պեղումների ժամանակ, գետնի արտաքին մակերեսից 1,20մ, խորությունից, ստորին՝ հելլենիստական շերտից: Պատրաստված է մանրահատ սպիտակ մանր հատիկների պարունակություն ունեցող, լավ հունցած կավից, որը թրծումից ստացել է բաց դեղնաշագանակագույն երանգ: Բեկորի ներքին մակերեսը պատած է ինչ որ սև,թանձր քսուքով, որը ներծծված է բեկորի պատին և թույլ է տալիս մտածել, որ ծառայել է անոթի մեջ լցվող նյութի պահպանությանը, քանի որ ամֆորաները ծառայել են որպես առևտրական տարա: Բեկորի ներսույթի աղեղի փոքրությունից, խեցու նրբությունից, առվակոսների խտությունից և խորությունից կարելի է եզրակացնել, որ անոթը եղել է ոչ մեծ և նրբիկ: Չունենալով անոթի պսակի, իրանի, նստուկի ձևերը՝ այն վերականգվում է հունական ամֆորաների բազմահարուստ տեսականու մեջ՝ աղերսներ փնտրելու եղանակով: Այդպիսի արտաքին մշակում ունեցող, հատկապես փոքր չափերի ամֆորաներն ունեն ոչ լայն, կոնաձև դեպի վեր լայնացող իրան, կլորավուն ուսերին նստած, ուռուցիկ շուրթով ավարտվող վզիկ: Կանթերը ամրացված են շուրթի տակ և հանգչում են անոթի ուսերին[1] (աղ. I, նկ.1): Ուսումնասիրողները գտնում են, որ այս մատնեքավոր ամֆորաները ստեղծվել են Արևելամիջերկրածովյան կենտրոններում և տարածվել անտիկ աշխարհի մյուս երկրներ[2]: Դրանց ամենավաղ օրինակները փյունիկյան ամֆորաներն են, հայտնաբերված Կարթագենից, Հյուսիսային Աֆրիկայից, որոնք թվագրվում են մ.թ.ա. 3-2-րդ դարերով (բարձր. 60-70 սմ, լայնք. 40 սմ): Միջերկրածովյան մյուս երկրներում դրանք տարածվել են մ.թ.ա. 1-ին - մ.թ. 1-ին դարում, իսկ մերձսևծովյան-հունական գաղութներում՝ միայն մ.թ. 2-րդ – 4-րդ դարերում[3]:

Հայաստանի անտիկ հուշարձաններում այս ամֆորաներից հայտնաբերվել են մեկ ամբողջական, միջին չափերի, օրինակ, Պաղնիկի[4], փոքր ամֆորայի հատակամերձ հատված՝ Արմավիրի միջնաբերդի գագաթի պալատական շինության[5] և ահա քննարկվող բեկորը՝ Տիգրանակերտի քաղաքային առաջին թաղամասի պեղումների միջոցին : Արմավիրի օրինակի կարևորությունը այն է, որ մենք պատկերացում ենք ձեռք բերում անոթի իրանի ստորին մասի և նստուկի վերաբերյալ՝ կլորավուն, կենտրոնում փոքրիկ փոսիկ: Այն կրկնում է Տանաիսում հայտնաբերված նույնատեսակ ամֆորաներին ոչ միայն նստուկի ձևով, այլև արտաքին մակերեսի մատնեքների խորությամբ և խտությամբ[6] , որը թույլ է տալիս առաջարկել անոթի ձևի վերականգնումը:

Հայաստան մ.թ.ա II դարից են ներմուծված ամֆորաների մյուս տեսակները՝ հայտնաբերված հիմնականում Արտաշատի, Արմավիրի պեղումներից դրանց ներկայացնում են Հռոդոսի (մ.թ.ա. II-Iդդ.), Կոսի (մ.թ.ա.I - մ.թ.Iդդ.), Պոնտական Հերակլեայի (մ.թ. I-IIդդ.), ուշ աթենական (մ.թ. III-IVդդ.) արտադրանքը[7]:

Այժմ այս նոր տեսակը ներկայացնում է մ.թ.ա. I – մ.թ. I -ին դարերում երկիր բերված, ամֆորաների հինգերորդ տեսակը:

**Ամֆորայի երկրորդ** բեկորը, կրկին հայտնաբերված քաղաքային Առաջին թաղամասից, խիստ զանգվածեղ հատակամաս է, դուրգով պատրաստման հետևանքով առաջացած փոսիկ- զալարներով (տրամ. 4,2 սմ):Արտաքին բաց գույնի մակերեսը հարթեցված է, թեթև փայլեցրած, խեցին կարմրաշագանակագույն, բավական խիտ, մանրահատ ավազի խառնուրդով: Բեկորի զննումից երևում է, որ անոթի հատակամասը ագուցված է մի յուրօրինակ ոտքի մեջ: Կրկին անդրադառնալով հելլենական ամֆորաների բազմազանությանը՝ կարծես պարզեցինք այն տեսակը որին պատկանել է քննարկվող բեկորը: Դա հարթ շուրթով, բարձր գլանաձև վզիկով, կտրուկ ուսերից կոնաձև ցած իջնող իրանով ամֆորաներ են, որոնց նստուկների այդ յուրօրինակ ձևը գրականության մեջ անվանվում է " հոլաձև" (куборовидный, աղ.1, նկ. 2): Հունական ամֆորաների դասակարգմամբ զբաղվող Վ. Գրեյսը և Ի.Բ.Բրաշինսկին այսպիսի նստուկով ամֆորաները համարում են Հռոդոսյան արտադրանք[8], իսկ Ս.Բ.Զեեստը, դրանք բնորոշ է համարում Արևելյան միջերկրածովյան շատ

---

[1]**Д. В. Шеглов**, Узкогорлые, светлоглиняные амфоры первых веков нашей эры, классификация и хронология, КСИА 156, М., 1978, с. 16, рис. 9.

[2] **И.Б. Зеест**, Керамическая тара Боспора ,МИА(Материалы и исследования по археологии СССР) 83, М.,1960,с.114, табл. XXXII; **Щеглов Д.,Б.**, указ,раб., с., 20

[3] **V. R. Grece.** Amporas and the ancient wine trade,(The American Schoolof classical studies at Athans ), Princeton, 1961, p. 37; **В. Ф, Гайдукевич**,Раскопки Тиритаки и Мирмекия в 1946 – 1952гг., МИА 85, 1958, с. 168 табл. рис. 20; **Г., М., Мелентьева,** Ольвийский " керамический " комплекс первых веков нашей эры КСИА( Краткие сообщения Института археологии АН СССР), 116, 1969, с. 24 – 25, рис. 2 / а .

[4] **R.P. Heper,** Pagnik Oreni excavations 1971,( Keban Project, 1971 activites, Middle East Technical University, Keban project publications, ser.,1, 4 )Ankara, 1974. p.108, taf. 95 / 2

[5] Տեղեկությունը մեզ տրամադրել է Մ.Հ. Զարդարյանը, որին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը

[6] Т.,М., Арсеньева, Д.,Б., Шелов, Раскопки юго- западного участка Танаиса (1964 – 1972гг.), Археологические памятники Нижнего Подонья, т. I, М., 1974, с. 149, табл. X / 3.

[7] М. Зардарян, Амфоры из раскопок Арташата, ИФЖ, 1977, 1,с., 270-271

[8] V.R. Grase, Notes on the Amphoras from the Koroni Peninsula, - Hesperia, vol. XXXII, 1963, fig. 1,5; И. Б. Брашинский, Греческий импторт на Нижнем Дону, Л., 1980, с. 31, табл. X, XXIII / 4,5:

կենտրոնների[1]: Տիգրանակերտի նմուշը ամենայն հավանականությամբ պետք է համարել Հռոդոսյան արտադրանք, քանի որ Հայաստան ներմուծված խեցեղենի մեջ ամենաբազմաքանակը այդ կենտրոնի ամֆորաներն են[2]:

**Հաջորդ ներմուծված** տեսակը սև լաքապատ անոթների՝ վզից ուսերին անցման մասեր են՝ պատրաստված դուրգով, խիստ մաքուր, լավ հունցած միատար կավից: Արտաքին մակերեսները պատած են թույլ մետաղական փայլ ունեցող, ոչ թանձր, սև, իսկ ներքուստ տաք կարմիր լաքերով ( բեկորի H= 5,0 սմ , ներքին D= 3,5 սմ , իսկ խեցու հաստությունը 0,5մմ է ): Տեխնիկական չափերի քննությունը հուշում են, որ բեկորները չեն կարող պատկանել ամֆորայի կամ սրվակ- բալզամարիի , քանի որ առաջինի համար դրանք փոքր են, իսկ երկրորդի համար՝ մեծ: Մեր պրպտումները հունական խեցանոթների տեսականու մեջ թույլ տվեցին առաջադրել դրանց անտիկ աշխարհում լայն տարածում ունեցող մեկ այլ տեսակի՝ սևալաք օլպիս- սրվակի[3] կամ սափորիկի[4], պատկանելու հավանականությունը ( աղ.I, նկ. 3 ):

Վ.Ֆ. Գայդուկևիչը Մերձսևծովյան հուշարձաններից (Միրմեկի, Տիրիտակի և այլնի) գտնված ոչ թանձր սևալաքապատ տեսականին ներմուծված է համարում փոքրասիական կենտրոններից մեկից, քանի որ մետրոպոլիայում այն այլևս չէր արտադրվում[5]: Հայաստանի հուշարձաններ Արտաշատից, Արմավիրից հայտնաբերված և մ.թ.ա III վերջով – մ.թ.ա I դարով թվագրվող նմանատիպ ներմուծումները Մ. Զարդարյանը համարում է Հոնիական, Էգեիդյան կենտրոնների արտադրանք[6], և մենք կարծում ենք, որ Տիգրանակերտի քննարկվող բեկորները կլրացնեն Հայաստան ներմուծած ոչ բազմաքանակ, բայց լավ հայտնի փոքրասիական սևաալաք անոթների այդ շարքը :

Երկու օրինակով հայտնաբերված անուշահոտ յուղերի տեղափոխմանն ու պահպանմանը ծառայող **սրվակ-ունգվենտարիները** (աղ.I, նկ.4) երկու տեսակ են ներկայացնում: Առաջինը իլիկաձև իրանով, նեղ, բարձր ոտքով և նույնքան երկար վզով , բաց օքրայավուն քուրքով պատված արտաքինով տեսակի ստորին մաս է , իսկ երկրորդը՝ արտաքինը սև լաքանման քուրքով պատած ու փայլեցրած, շատ խիտ ու մաքուր, մոխրագույն կավից պատրաստված անոթի հատակամերձ հատված է: Երկրորդի ուռուցիկ իրանի կողերը կտրուկ անցումով է միացված գոգավորություն ունեցող նստուկին: Այս երկու տեսակի ունգվենտարիների հայտնաբերումները շատ առատ են Հայաստանի և հարևան երկրների հուշարձաններում և շատ որոշակիորեն թվագրվում են մ.թ.ա 1 – ին - մ.թ. 3- րդ դարերով[7]:

Տիգրանակերտի անտիկ առաջին թաղամասի պեղումների միջոցին հայտնաբերված հաջորդ անոթի բեկորները, կարծում ենք, պատկանում են մատնեքավորած ուսերով, հարթ կոնաձև ներքնամասով, ցածր օղակաձև նստուկով , ուղղահայաց ամրացված կանթերով, արտակարգ գեղեցիկ **կանթարոսի** : Այն ևս վերը ներկայացրած երկրորդ ունկվենտարիի նման պատրաստված է շատ խիտ_մոխրագույն խեցուց և ծածկված է թանձր լաքանման սև քուրքով և փայլեցված է կատարյալ (աղ.I, նկ.5 ): Այս անոթները ևս հունական ներմուծվող խեցեղենի տարածված ձևերից են:

Ներմուծված խեցեղենի հաջորդ խումբը **անտիկ ջնարակած** անոթները ներկայացնող բեկորներն են; Դրանք հայտնաբերվել են Միջնաբերդի հյուսիսային պարսպապատի մաքրման, և քաղաքային Առաջին թաղամասի պեղումների ժամանակ: Միջնաբերդից գտնվածը հարթ նստուկից հավասարաչափ վեր լայնացող կողերով անոթի հաստապատ հատակամաս է: Այն պատրաստված է շատ մաքուր, զտված, կաթնաճերմակ կավից, պատված է նույնքան որակյալ երկնագույն թանձր ջնարակով: Քանի որ չունենք տվյալներ անոթի վերնամասի ձևի վերաբերյալ, ենթադրում ենք որ այն կարող էր պատկանել միականթ փարչանման անոթի: Քաղաքային թաղամասի բեկորները, թեև հայտնաբերվել են տարբեր տարիներ, բայց պատկանում են միևնույն անոթին:

Դրանք պատրաստված են դուրգով, դեղնավուն, շատ մաքուր, լավ հունցած խիտ կավից: Կապտականաչավուն ջնարակը, որը տեղ-տեղ ավելի մուգ ու թանձր է քսած, ծածկում է անոթի ողջ արտաքինը և շուրթի ներքին եզրահատվածը: Անոթի շեփորաձև լայնացող շուրթով ավարտվող գլանաձև վիզը և ողջ իրանի կեսը հարդարված է հորիզոնական ներճկված գոտիներով: Կանթի պահպանված բեկորը ոլորուն է և ամրացված է եղել շրթեզրից ցած, թեթև վեր ձգվելով՝ իջել է ցած ու ամրացել անոթի ուսին: Իր ձևակազմական և հարդարման բոլոր տվյալներով անոթն իր աղերսներն է գտնում Արմավիրի ու Արտաշատի պեղումներով հայտնաբերված, ոլորուն կանթերով, օղակավոր նստուկով, լայնաբերան անոթների հետ[8] (աղ.II, նկ.6) և իր պատրաստման տեխնիկական հատկանիշներով, ջնարակով և այն հանգամանքով, որ հայտնաբերվել են մ.թ.ա. I-ին դարի կեսերին կառուցած քաղաքում, լրացնում են Հայաստանում մ.թ.ա. 2-րդ – մ.թ.2-րդ դարերում լայն տարածում ստացած,

[1] **И.Б. Зеест,** Внутренная торговля Прикубанья с Фанагорией, МИА, 19, 1951, с. 117.

[2] **М. Зардарян**, Амфоры из раскопок Арташата, ИФЖ, 1977, №1, с. 266.

[3] **Francine Blonde, Jacque Y. Perreault et C.Peristeri,** Les Ateliers de Potiers dans le Monde Grec aux Epoques Geometrique, Archaique et Classique, bulletin de corespondance Hellenique ,supplement XXIII, 23, fig. 11/6,7, fig. 12/6,7.

[4] **И.Б Брашинский,** указ. раб., табл.XVIII/225, 226; **В.А. Латышева,** Раскопки античного поселения Маслины в Северозападном Крыму, КСИА 156, М., 1978, с. 56, рис. 4,2.

[5] **В.Ф.Гайдукевич,** Раскопки Мирмекия в 1935-1938гг, МИА 25, 172,рис.71.

[6] **М.А.Зардарян,** Торгово-экономические связи Армении с элленистическом миром в III-I вв. до н.э., автореферат, Ер., 1986 с. 7-8.

[7] **В.Ф.Гайдукевич,** Загородная сельская усадьба эллинистической эпохи в районе Мирмекия, в кн.Боспорские города, Ленинград, 1981, с. рис. 6 / 2,3; **Ю.М. Гагошидзе,** Самадло (археологичские раскопки)-Тбилиси, 1979,с.43-44, рис. 32, 39, 40, рис. 6, 231; **О, Лордкипанидзе,** Ванское Городище, Вани I, с.63, рис.85; **Գ.Ա. Տիրացյան,** Արմավիրի պեղումները, Լրաբեր 1972թ, 2, էջ 41: Նույնի Արմավիրի 1973թ պեղումների նյութերից,ՊԲՀ 1974, №3, նկ. 3:

[8] **Գ.Ա.Տիրացյան,** Արմավիրի պեղումները, Լրաբեր, 1972, № 2, էջ 40; Նույնի Լրաբեր1973, № 5, էջ 100-101, **Ժ.Դ.Խաչատրյան,** Հայաստանի անտիկ շրջանի ջնարակած խեցեղենը, ՊԲՀ 1977, № 3, էջ 187, աղ II/3-7:

ջնարակած խեցեղենի շարքը, հայտնաբերված Արմավիրում, Արտաշատում, Սիսիանի իշխանական դամբարանում, Գառնիում և այլուր : Տիգրանակերտի նմուշները նաև ընդարձակում են անտիկ ջնարակի տարածման սահմանները դեպի Հայոց ծայր արևելյան կողմերը: Այս բնագավառում կատարված ուսումնասիրությունները բացահայտել են Հայաստանի անտիկ ջնրակած խեցեղենի միջագետքյան ծագումը, դրա պատկանելիությունը ջնարակած խեցեղենի արևելյան թևին՝ վերագրելով դրանք զանգվածային արտադրանք ունեցող կենտրոններ Տիգրիսի վրայի Սելևկիայի և Դուրա Եվրոպոսի արտադրանքին[1]:

Մ. Հ. Զարդարյանը, զբաղվելով Հայաստանի և հելլենիստական աշխարհի առևտրատնտեսական կապերի ուսումնասիրությամբ, կոնկրետացրեց Հայաստանի ջնարակած խեցեղենի արտադրության կենտրոնը Տիգրիսի Սելևկիայում՝ նշելով, որ այդ կենտրոնը իր առևտրական կապերը իրականացնում էր հիմնականում Մերձեփրատյան և ուղղակի Տիգրիսյան մայրուղիներով[2]: Կարծում ենք, որ Տիգրանակերտը այս հարաբերությունների մեջ կարող էր ընդգրկվել հայկական հելլենիստական առևտրի III շրջափուլում միայն՝ մ.թ.ա 60 – մ.թ 50- ական թվականներին[3]:

**Խնկարկման անոթի** բեկորը ,որը շատ հատախեցի է, պատրաստված խիտ մանրահատ կավից և ձնավորված է երկու հատած կոնաձև մասերի, զազաթներով իրար միացման եղանակով: Միացման տեղում անոթը ունի զարդարուն ուռուցիկ գոտի (աղ.II, նկ.7): Խնկարկման անոթի նմանատիպ ձևակազմությունը նորություն է թվում հայկական միջավայրում, սակայն հյուսիսմերձսևծովյան անտիկ հուշարձաններում դրանք առատ են, կազմում են մի քանի տարատեսակների խմբեր: Դրանց բազմության մեջ հանդիպում են մեր անոթին նման օրինակներ և թույլ են տալիս մեր նմուշի արտադրության կենտրոնը տեսնել այդ տարածքաշրջանում:

Հելլենիստական մշակույթին խիստ բնորոշ մի ճյուղի՝ **կորոպլաստիկայի՝** օրինակներ Տիգրանակերտից հայտնաբերվել են առայժմ միայն երկու բեկոր: Մեկը գլխաշորով կնոջ արձանիկի հետնամասի բեկոր է (աղ.II, նկ.8) ( 6,5 X 3,0 սմ), մյուսը՝ թռչնի իրանի կենտրոնական մաս (3,2X2,5սմ, աղ.II, նկ.9): Համադրելով ուշ հելլենիստական հուշարձաններում հայտնաբերված տերակոտային արձանիկների հավաքածուների մեջ հանդիպող նմանատիպ աղերսների հետ առաջինը կարելի է վերագրել որևէ աստվածուհու, իսկ երկրորդը վերականգնել որպես աղավնու արձանիկներ: Դրանք պատրաստված են երկփեղկ կաղապարով, շատ լավ հունցած, միատարր՝ առաջինը թրծումից ստացված մուգ շագանակագույն, երկրորդը `դեղնաօքրայավուն կավերից: Արձանիկների ներսույթում պարզորոշ ընթերցվում է պատրաստած վարպետի մատների, իսկ եզրերին՝ երկու մասերի միացման կարերի հետքերը: Թեև արձանիկները կրում են սխեմատիկության, մարմնաձևերի մշակման պայմա-նականության հատկանիշեր, այնուամենայնիվ պատկանում են հելլենիստական դարաշրջանում իր զարգացման գագաթնակետին հասած, բազմաժանր, բազմաթեմատիկ և գաղափարական ծանրաբեռնվածություն կրող կորոպլաստիկային[4]:

Այսպիսի արձանիկները գիտական գրականության մեջ համարվում են խաղալիքներ կամ պաշտամունքի նվիրատվական առարկաներ: Մենք հակված ենք երկրող կարծիքին և գտնում ենք, որ դրանք նվիրատվություններ են, աստվածությունների խորհրդանիշներ, հատկապես աղավնիների պատկերները, որոնք հանդիպում են աստվածուհիների արձանիկների հորինվածքներում: Դրանք դրվել են տաճարների և տնային պաշտամունքի անկյունների նվիրատվական սեղաններին և դամբարաններում ննջեցյալների հետ, որպես զոհաբերություններ խտոնիկ աստվածներին[5]:

Տիգրանակերտի պեղումներով ձեռք բերված ներմուծված այս նյութերի և կորոպլաստիկայի թեև համեստ, բայց հատկանշական նմուշների առկայությունը խոսում է քաղաքի բնակչության հելլենիստական մշակույթի բոլոր կողմերին լավատեղյակ և հաղորդակից լինելու մասին: Ներմուծված նյութերի սակավությունը, բեկորային վիճակը առայժմ թույլ չեն տալիս հստակորեն խոսել դրանց արտադրող, ներմուծող և երկրում տարածող կենտրոնների մասին: Ուստի ընդունված կարգով Արցախի Տիգրանակերտի ներմուծումը կապում ենք Հայաստանի ավանդական գործընկերներ Փոքր Ասիայի, Հոնիայի, Միջագետքի, Հյուսիսմերձսևծովյան արտադրական կենտրոնների հետ, որոնց հետ առևտրի ծավալը մ. թ. ա առաջին հազարամյակի սկզբից ակտիվանալով մ. թ. ա 1-ին – մ.թ. 1-ին դարերում ընդլայնվեց և հասավ իր ծաղկման գագաթնակետին: Դա պայմանավորված էր Տիգրան Մեծի ստեղծած լայնածավալ պետության պայմաններում կումունիկացիոն ուղիների վրա հաստատուն հսկողություն սահմանելու և արևելքում առևտրա-քաղաքական միջնորդ դառնալու հետ:

Համոզված ենք, որ Արցախի Տիգրանակերտի հետագա ուսումնասիրության գործընթացը կառատացնի քաղաքի առևտրատնտեսական և մշակութային կապերը բացահայտող նյութերի նորանոր զյուտերով:

[1] **Գ.Ա.Տիրացյան,** նշվ. աշխ., 1973, № 5, էջ 100-101; **Ժ.Դ.Խաչատրյան,** նշվ. աշխ., ՊԲՀ 1977, №3, էջ 188:

[2] **М.А.Зардарян,** Торгово-экономические связи Армении с элленистическом миром в III-I вв. до н.э., автореферат, Ер., 1986 с.8.

[3] Նույն տեղում , էջ 16-17:

[4] **М.А.Наливкина,** Терракоты Мирмекия и Тиритаки, МИА 25, 1952, с.334, рис.22/2: М.М.Кобылина, Терракотовые статуэтки Пантикапея и Фанагории, М.1961,с. 35–36, таб. 57/5

[5] **П.Ф. Силантьева,** Терракоты Пантикапея, САИ, вып. Г 1-11, ч . II, 1971, с. 16-17, таб, 4/ 2,4,5,6:

**Б.И. Денисьева,** Коропластика Босфора, Л. 1981, таб. XII/ г, д, з.

Աղյուսակ I



1



2



3



4



5



6



7



8



9

*ՀՏԴ 352(479.243)* *Պատմություն*

***Տարոն Հակոբյան***
***ավագ դասախոս, պ.գ.թ , ԱրՊՀ պատմության ամբիոն***

## *ՊԵՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՄԿԻԶԲԸ և ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (1992 Թ. ՀՈՒՆՎԱՐ - ԱՊՐԻԼ ԱՄԻՍՆԵՐԻՆ)*

*ԼՂՀ-ի հռչակումից հետո սկսվեց նոր իշխանական կառույցների, առաջին հերթին՝ օրենսդիր մարմնի՝ Գերագույն խորհրդի ձևավորման գործընթացը: ԼՂՀ-ում պետական շինարարության առանձնահատկությունն այն է, որ հանրապետության հռչակումից հետո սկզբնավորված իշխանական կառույցների, առաջին հերթին՝ օրենսդիր, ապա և գործադիր մարմինների ձևավորումը ընթանում էր ռազմական շինարարության խնդիրների լուծմանը զուգահեռ՝ չընդհատվող ռազմական գործողությունների պայմաններում: ԼՂՀ օրենսդիր մարմինն իր գործունեության հենց սկզբից միջազգային տարբեր կոնվենցիաներին միանալու ուղեգիծ որդեգրեց՝ նպատակ ունենալով ստեղծել ազատ, իրավական և ժողովրդավարական պետություն:*

*Բանալի բառեր՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակում, Գերագույն խորհուրդ, Նախարարների խորհուրդ, ինքնապաշտպանական ուժեր, պաշտպանության խորհուրդ, ԼՂՀ պաշտպանության կոմիտե:*

***Тарон Акопян,***
***к.и.н., кафедра истории АрГУ***

## *НАЧАЛО И ОСОБЕННОСТИ ПРОЦЕССОВ ГОСУДАРСТВЕННОГО СТРОИТЕЛЬСТВА В НАГОРНО-КАРАБАХСКОЙ РЕСПУБЛИКЕ (январь – апрель 1992г.)*

*После провозглашения независимости НКР начался процесс формирования органов власти и в первую очередь – законодательного органа, Верховного совета. Особенность государственного строительства в НКР заключается в том, что формирование органов власти, в частности, законодательной, а затем и исполнительной власти, начавшееся после провозглашения республики, проходило параллельно с решением вопросов военного строительства, в условиях непрекращающихся военных действий. С самых первых дней своей деятельности законодательный орган НКР встал на путь присоединения к различным международным конвенциям, преследуя цель создать свободное, правовое и демократическое государство.*

*Ключевые слова: провозглашение Нагорно-Карабахской Республики, Верховный совет, Совет министров, силы самообороны, Совет обороны, комитет обороны НКР.*

***Taron Hakobyan,***
***PhD, History department of Artsakh State University***

## *THE BEGINNING AND FEATURES OF STATE BUILDING IN THE NAGORNO-KARABAKH REPUBLIC (January-April of 1992)*

*The formation process of power bodies and first of all of the legislative one – the Supreme Council - started after the proclamation of the independence of the NKR. The feature of state-building in the NKR lies in the fact that the establishment of authority bodies, particularly, the legislative and then executive powers which started after the proclamation of the republic, passed simultaneously with solution of issues of military building in conditions of unceasing military actions. Just since the first days of its activity, the NKR legislative body has performed its commitment to various international conventions aiming at the creation of a free, legal and democratic state.*

*Keywords: declaration of the Nagorno Karabakh Republic, Supreme Council, Council of Ministers, Self-Defense forces, Council of Defense, the NKR Defense Committee.*

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) հռչակումից հետո սկսվեց նոր իշխանական կառույցների, առաջին հերթին՝ օրենսդիր մարմնի՝ Գերագույն խորհրդի (ԳԽ) ձևավորման գործընթացը: Պետական և ռազմական շինարարության խնդիրները լուծվում էին զուգահեռաբար չընդհատվող ռազմական գործողությունների պայմաններում: ԼՂՀ առաջին գումարման ԳԽ-ում, որը հետագայում անվանվեց ԼՂՀ խորհրդարան (այժմ՝ ԼՂՀ Ազգային ժողով), պետք է ընտրվեր 81 պատգամավոր: Ընտրությունների օր նշանակվեց 1991թ. դեկտեմբերի 28-ը: Ընտրությունների անցկացման կարգը քննարկվեց ԼՂՀ գործկոմի դեկտեմբերի 19-ի նիստում[1]: Կազմավորվեց 81 ընտրատարածք[2], այդ թվում նաև բոլոր ադրբեջանաբնակ վայրերում: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ հաստատվեց Է. Պետրոսյանը:

Դեկտեմբերի 28-ին կայացան ԼՂՀ ԳԽ ընտրությունները, որոնք անցկացվեցին մեծամասնական ընտրակարգով՝ ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ:

---

[1] Տես Աբրահամյան Հ., Ճակատագրին ընդառաջ, Երևան, 2001, էջ 147:
[2] Տես՛ Օհանջանյան Մ., Անկախության քայլերը. ԼՂՀ-ում անցկացված հանրաքվեն և ընտրությունները (1991-1998թթ.), Ստեփանակերտ, 1998, էջ 12:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


*Հրանտ Աբրահամյան*
*1988թ. ՇՈՒՇԻԻ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ* 3

*Հասմիկ Ամիրջանյան*
*ՀՈՎՍԵՓ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐՂՈՒԹՅԱՆԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒՍ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՀԵՏ ԱՐՑԱԽԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (XVIII Դ. ՎԵՐՋ)* 6

Անդրեյ Արեշեվ
*ԶՍՊՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԻՆ* 11

*Իսկուհի Ավանեսյան*
ԿԱՆԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐՑԱԽԻ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԺԱՄԱՆԱԿ (1988-1994թթ.) 15

*Սերգեյ Հախվերդյան, Գայանե Շաքունց*
*ՃՇՏՎՈՒՄ Է ՄԱՐԳԱՇՈՐ ԳՅՈՒՂԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՅԴ ԳՅՈՒՂՈՒՄ ԵԿԵՂԵՑԻ ԿԱՌՈՒՑԱԾ ՍՅՈՒՆԵՑԻ ՏԻԿՆՈՋ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ* 19

*Վ. Բալայան*
*ԱՂԱ ՄՈՒՀԱՄՄԱԴ ԽԱՆԻ 1795 ՈՒ 1797 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ ԴԵՊԻ ՇՈՒՇԻ և ԴՐԱ ՀԵՏևԱՆՔՆԵՐԸ* 22

*Նելլի Բաղդասարյան*
*ԱՐՏԱՔԻՆ ՀԱԿԱԿՇՌՈՒՄՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱԴՐԲԵՋԱՆԱ-ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՍՐՄԱՆ ՆՈՐ ՓՈՒԼՈՒՄ /2016 Թ. ԱՊՐԻԼ-ՀՈՒԼԻՍ /* 28

*Էդուարդ Դանիելյան,*
*ԱՐՑԱԽԻ ԳԱՀԵՐԵՑ ԻՇԽԱՆ ՀԱՅԿԱԶՈՒՆ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼ ԴՈԼԱՅԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ* 34

*Վլադիմիր Յեվսեյեվ*
*ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ՌԱԶՄԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ ՏԵՍԱԿԵՏ)* 39

*Ա. Գաբիլայա*
*ԱԲԽԱԶԻԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԻԶԱԿԵՏՈՒՄ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆԵՐԿԱՆ* 43

*Ինեսա Կարապետյան, Արմինե Գաբրիելյան,*
*ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԽԵՑԵՂԵՆԸ* 46

*Տարոն Հակոբյան*
*ՊԵՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՍԿԻԶԲԸ և ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (1992 Թ. ՀՈՒՆՎԱՐ - ԱՊՐԻԼ ԱՄԻՍՆԵՐԻՆ)* 52

*Հայկ Հակոբյան*
*ԽՈՐԱՆԱՇԱՏԻ ՎԱՆՔՆ ՈՐՊԵՍ ԱՐՑԱԽԻ ԿՐՈՆԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ևՍ ՄԻ ՎԱՌ ՎԿԱ (ՁԵՌԱԳՐԵՐԻ ՈՒ ՆՈՐԱՀԱՅՏ ՎԻՄԱԳՐԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)* 56

*Լյուբա Կիրակոսյան*
ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԱՄՐԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 61

*Ալեքսանդր Կրիլով*
*ԼՂՀ ԱՌԱՋԻՆ ՏԱՍՆԱՄՅԱԿԸ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ* 67

*Մարինե Հարությունյան*
*ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՃՅՈՒՂԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՐՑԱԽՈՒՄ XVII Դ.ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XVIII Դ. ՍԿԶԲԻՆ* 70

*Արսեն Մելիք-Շահնազարյան*
*1991Թ-Ի ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ՊՈՒՏՉԸ ԵՎ ԼՂՀ ՀՌՉԱԿՈՒՄԸ* 76

*Էդիկ Մինասյան*
*ԱՐՑԱԽԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ, ԱԶԱՏԱՄԱՐՏԻ և ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՄԱՆ ՈՒ ԿԱՅԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ* 81

*Արնիկ Պետրոսյան,*
*ՄՈԴԵՌՆԻԶԱՑԻԱՅԻՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ:ԼՂՀ-ՈՒՄ ՄՈԴԵՌՆԻԶԱՑԻԱՅԻ ԸՆԹԱՑՔՆ ԱՐԳԵԼԱԿՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ* 90

Համլետ Պետրոսյան
ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՆ ՈՒ ՎԱՉԱԳԱՆ ԲԱՐԵՊԱՇՏԻ ԿՐՈՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ 96

Վլադիմիր Պոնոմարյուվ
*ԱՐՑԱԽՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՐՈՍԻ ՓԱՌԱՈՐ ՄԱՐՏԱԿԱՆ ՈՒՂԻՆ. ՇԱՐՔԱՅԻՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԱՐՇԱԼ* 110

*Միեր Քումունց, Զոհրաբ Ըոքոյան*
ՔԱՐԱՎԱՋ (ԽՈՒԴԱՓԵՐԻՆ). ԿԱՄՈՒՐՋԸ և ՊԱՏՄԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԸ 113

*Վ.Ա. Սաֆարյան,*
ԱՐՑԱԽԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ 121

*Ն.Պ.Սարումյան*
ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ՝ ԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԹՈՆՔԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ 125

*Սեպյան Կ.Ա.*
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՏԱՄԱՌՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ 132

*Գնորգ Ստեփանյան*
ԱՐՑԱԽԱՀԱՅԵՐԻ ԴԵՐԸ ԲԱՔՎԻ ՆԱՎԹԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ. XIX Դ.
ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ-XX ԴԱՐԱՍԿԻԶԲ
(ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ) 137

*Թեյմուրազ Թաղտայեվ*
1920Թ. ՀԱՐԱՎԱՅԻՆ ՕՍԻԱՅԻ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 142

*Մալիկ Թենուց*
ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ և ԱՐՑԱԽՈՒՄ 1722-1730ԹԹ. ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ:
ԱՐՑԱԽԻ ԵՎ ՍՅՈՒՆԻՔԻ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ 149

*Տատյանա Վարդանեսովա*
IX- XIII ԴԴ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՋՆԱՐԱԿԱՊԱՏ ԽԵՑԵՂԵՆԸ
ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ 153

*ԱրարատՎարդանյան*
ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈւԹՅՈւՆՆԵՐԻ ԵՎ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ
ԼՂՀ-ՈւՄ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈւՄ 160

*Ռուբեն Զարգարյան*
ԱԴՐԲԵՋԱՆԻ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 165

*Շահեն Աբրահամյան*
ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԼՂՀ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ
ԳՈՐՑԸՆԹԱՑԻ ՇՈՒՐՋ 170

*Ալվարդ Աբրահամյան*
ԼՂՀ ՊԵՏԱԿԱՆԱԿԵՐՏՄԱՆ ՊԱՏՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԵԼԱԿԵՏՆԵՐԸ 173

Լարիսա Ալավերդյան
ԼՂՀ ՕՐԻՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼԵԳԻՏԻՄ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ (ՔԱՂԱՔԱԻՐԱՎԱԿԱՆ
ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿՈՆՑԵՊՑԻԱՅԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ) 176

*Վահե Դավթյան*
ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉ 184

*Աննա Հակոբյան*
ՆԵՐԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԿԱՊԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 187

Արմեն Քարայան
ԱՐՑԱԽԸ և ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐևՄՏՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ 189

Ինալ Սանակոյեվ
ՎՐԱՑ-ՕՍԵԹԱԿԱՆՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸՈՐՊԵՍԻՆՔՆՈՒԹՅԱՆՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ 193

*Մալիկ Թելունց*
«ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԿՈՆՖԼԻԿՏԸ». ԴՐԱ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՆ ՈՒ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԼՂՀ և ՀՀ
ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 25-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԻԹՈՎ և ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆ ԱՊՐԻԼՅԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՏՐՎԱԾՔՈՎ 196

*Մարետա Նիկողոսյան*
ԷԹՆԻԿ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ 204

Հրայր Փաշայան, Լիանա Բալայան
1991-Ի ԼՂՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔՎԵՆ ԵՎ ՀԵՏԱԶԳՎԱԾ ՀԱՆՐԱՔՎԵԻ ԳԱՂԱՓԱՐԸ
ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ 211

*Ալեքսանդր Մանասյան*
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ
*(Ստատուս-քվոյից նախանջելու առաջարկության օրինակի վրա)* 216

*Արման Նավասարդյան*
ՀՀ և ԼՂՀ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ և ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՆԵՐԿԱ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 221

| | |
|---|---|
| *Սողոմոնյան Նաիրա*<br>*ԳՈՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՈՐՊԵՍ ԷՔԶԻՍՏԵՆՑԻԱԼԻԶՄԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ* | 226 |
| *Արմինե Արզումանյան*<br>*ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՅԲԲԵՆԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ* | 229 |
| *Կարինե Ավանեսյան*<br>*ԳՐԱԲԱՐԻ Ի(Յ) ՆԱԽԴՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՂԻՇԵԻ «ՎԱՍՆ ՎԱՐԴԱՆԱՅ ԵՒ ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ* | 235 |
| *Օֆելյա Բաբայան*<br>*ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ. ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ* | 239 |
| *Սիլվա  Մինասյան*<br>*ԱՐՑԱԽ/ՂԱՐԱԲԱՂ ԲԱՌԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՎ Հ. ՇԻՐԱԶԻ ՉԱՓԱԾՈՅՈՒՄ* | 242 |
| *Շողեր Մինասյան*<br>*ԼԵԶՎԱԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌԻ ԴԱՐՁՎԱԾՆԵՐՈՒՄ* | 246 |
| *Ժենյա Պողոսյան*<br>*ՄԻ ՇԱՐՔ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽԱՉԵՆԻ ԽՈՍՎԱԾՔՈՒՄ* | 251 |
| *Արմեն Սարգսյան*<br>*ԱՐՑԱԽԻ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ* | 255 |
| *Շուշանիկ Սաղյան*<br>*«ԱՐՑԱԽ» ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՀԻՄՔՈՎ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱԿԱՆ ԼԵԶՎՈՒՄ* | 260 |
| *Նունե  Խաչատրյան*<br>*ԵՐԳԻԾԱՆՔԻ ՄԻ ՔԱՆԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ «ԹՈՆԴՐԱԿԵՑԻՆԵՐ» ՊՈԵՄՈՒՄ* | 263 |
| *Հասմիկ  Ղազարյան*<br>*ԳՈՅԱԿԱՆԻ ԹՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ, ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ, ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ* | 267 |
| *Ծովինար Հասրաթյան*<br>ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ  ՄԻՋՈՑՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ  ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ («ՄԱՅՐԵՆԻ 6») | 272 |
| *Միրա Յարամիշյան*<br>ԵՂԵՌՆԻ ԹԵՄԱՆ ԿՐՏՍԵՐ  ԴՊՐՈՑԻ  «ՄԱՅՐԵՆԻ» ԴԱՍԱԳՐՔԵՐՈՒՄ | 276 |
| *Ռենա Մովսեսյան*<br>*ԲԱՌԻՄԱՍՏԱՅԻՆ ԲԱՐԲԱՌԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՑԱԽԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ* | 279 |

## СОДЕРЖАНИЕ


*Грант Абрамян*
*ТРАГЕДИЯ ШУШИ В 1988 ГОДУ* 3

*Асмик Амирджанян*
*ПЕРЕГОВОРЫ МЕЖДУ АРХИЕПИСКОПОМ ИОСИФ АРГУТЯН И РУССКИХ ДЕЯТЕЛЯХ ОБ ОСВОБОЖДЕНИЯ АРЦАХА (КОНЕЦ XVIII В.)* 6

*Андрей Арешев*
О МЕХАНИЗМАХ СДЕРЖИВАНИЯ В НАГОРНОМ КАРАБАХЕ НА ФОНЕ РЕГИОНАЛЬНОЙ НЕСТАБИЛЬНОСТИ 11

*Искуи Аванесян*
*ДЕЯТЕЛЬНОСТЬ ЖЕНЩИН В ОБЩСТВЕННЫХ –БЛАГОТВОРИТЕЛЬНЫХ УЧРЕЖДЕНИЯХ И СОЮЗАХ В ГОДЫ НАЦИОНАЛЬНО- ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЫ АРЦАХА (1988-1994ГГ.)* 15

Сергей Ахвердян, Гаяне Шабунц
*УТОЧНЯЕТСЯ МЕСТОПОЛОЖЕНИЕ СЕЛА МАРГАДЗОР И ИДЕНТИЧНОСТЬ СЮНИКСКОЙ ДАМЫ, КОТОРАЯ В ЭТОМ СЕЛЕ ПОСТРОИЛА ЦЕРКОВЬ* 19

*В. Балаян*
*НАШЕСТВИЯАГА МОХАММЕДА НА ШУШУ В 1795-97ГГ. И ИХ ПОСЛЕДСТВИЯ* 22

*Нелли Багдасарян*
*ПРОЯВЛЕНИЕ ВНЕШНИХ ПРОТИВОВЕСОВ НА НОВОМ ЭТАПЕ ОБОСТРЕНИЯ АЗЕРБАЙДЖАНО-КАРАБАХСКОГО КОНФЛИКТА /АПРЕЛЬ-ИЮЛЬ 2016 Г./* 28

*Эдуард Даниелян*
*ОБЩЕАРМЯНСКАЯ ЦИВИЛИЗАЦИОННАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ВЕЛИКОГО КНЯЗЯ АРЦАХА АЙКАЗУН ХАСАНА-ДЖАЛАЛА ДОЛЫ* 34

*Владимир Евсеев,*
*О НЕКОТОРЫХ ПОДХОДАХ К УРЕГУЛИРОВАНИЮ НАГОРНО-КАРАБАХСКОГО КОНФЛИКТА (ВЗГЛЯД ВОЕННОГО ЭКСПЕРТА)* 39

*Габелая А.С.*
АБХАЗИЯ В ФОКУСЕ ВНИМАНИЯ МИРОВЫХ ДЕРЖАВ: ИСТОРИЯ И СОВРЕМЕННОСТЬ 43

*Инеса Карапетян, Армине Габриелян*
*ИМПОРТНАЯ КЕРАМИКА ИЗ АРЦАХСКОГО ТИГРАНАКЕРТА* 46

*Тарон Акопян*
*НАЧАЛО И ОСОБЕННОСТИ ПРОЦЕССОВ ГОСУДАРСТВЕННОГО СТРОИТЕЛЬСТВА В НАГОРНО-КАРАБАХСКОЙ РЕСПУБЛИКЕ (январь – апрель 1992г.)* 52

*Айк Акопян*
*ХОРАНАШАТСКИЙ МОНАСТЫРЬКАК ЕЩЕ ОДНО ПОДТВЕРЖДЕНИЕ АРЦАХСКОЙ РЕЛИГИОЗНО-ПОЛИТИЧЕСКОЙ И КУЛЬТУРНОЙ ЖИЗНИ*
*(ОСНОВАННЫЕ НА НОВЫХ РУКОПИСЯХ И ЛИТОГРАФИИ)* 56

*Люба Киракосян*
*ОБОРОНИТЕЛЬНЫЕ СООРУЖЕНИЯ АРЦАХСКОГО ТИГРАНАКЕРТА В КОНТЕКСТЕ ЭЛЛЕНИСТИЧЕСКОЙ ФОРТИФИКАЦИИ* 61

*Александр Крылов*
ПЕРВОЕ ДЕСЯТИЛЕТИЕ НКР: ОСОБЕННОСТИ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ 67

*Марине Арутюнян*
*РАЗВИТИЕ НЕКОТОРЫХ ОТРАСЛЕЙ НАУКИ В АРЦАХЕ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ 17-ГО ВЕКА И В НАЧАЛЕ 18-ГО ВЕКА* 70

*Арсен М елик-Шахназаров*
*АВГУСТОВСКИЙ ПУТЧ 1991 ГОДА И ПРОВОЗГЛАШЕНИЕ НКР* 76

*Эдик Минасян* 81

*Аревик Петросян,*
*ТЕОРИЯ МОДЕРНИЗАЦИИ: ФАКТОРЫ ПРЕПЯТСТВУЮЩИЕ МОДЕРНИЗАЦИИ НКР* 90

*Гамлет Петросян*
*АРЦАХСКИЙ ТИГРАНАКЕРТ И РЕЛИГИОЗНЫЕ РЕФОРМЫ ВАЧАГАНА БЛАГОЧЕСТИВОГО* 96

*В.А. Пономарёв*
*СЛАВНЫЙ БОЕВОЙ ПУТЬ ВЫДАЮЩЕГОСЯ НАРОДНОГО ПОЛКОВОДЦА ИЗ АРЦАХА: ОТ РЯДОВОГО ДО МАРШАЛА* 110

*Мгер Кумунц, Зограб Ркоян*
*МОСТ И ИСТОРИЧЕСКАЯ ТЕРРИТОРИЯ КАРАВАЗА / ХУДАПЕРИН/* 113

*В.А.Сафарян*
*К ВОПРОСУ ФАЛЬСИФИКАЦИИ ИСТОРИИ АРЦАХА* 121

*Н.П.Сарумян*
*АРЦАХСКОЕ ДВИЖЕНИЕ КАК ПРОЯВЛЕНИЕ НАЦИОНАЛЬНОГО ВОЗРОЖДЕНИЯ* 125

*Сепян К.А.*
*КОРНИ НАГОРНО-КАРАБАХСКОГО КОНФЛИКТА* 132

*Геворг Степанян*
*РОЛЬ АРЦАХСКИХ АРМЯН В РАЗВИТИИ НЕФТЯНОЙ ПРОМЫШЛЕННОСТИ В БАКУ В КОНЦЕ 19-ОГО И НАЧАЛЕ 20-ОГО ВЕКОВ* 137

| | |
|---|---|
| *Таймураз Тадтаев*<br>*ТРАГИЧЕСКИЕ СОБЫТИЯ В ЮЖНОЙ ОСЕТИИ В 1920 ГОДУ* | 142 |
| *Малик Телунц*<br>*ОСВОБОДИТЕЛЬНАЯ БОРЬБА СЮНИКА И АРЦАХА В 1722–1730 ГГ. И РОССИЯ. ТЕРРИТОРИЯ И ОРГАНЫ САМОУПРАВЛЕНИЯ АРМЯНСКИХ ОБЛАСТЕЙ АРЦАХА И СЮНИКА* | 149 |
| *Татьяна Варданесова*<br>*СРЕДНЕВЕКОВАЯ ГЛАЗУРОВАННАЯ КЕРАМИКИ IX-XIII ВВ.ПО МАТЕРИАЛАМ РАСКОПОК ТИГРАНАКЕРТА В АРЦАХЕ* | 153 |
| *Арарат Варданян*<br>*ВКЛАД БЛАГОТВОРИТЕЛЬНЫХ ОРГАНИЗАЦИЙ И БЛАГОТВОРИТЕЛЕЙ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ В ОСУЩЕСТВЛЕНИИ ЗДРАВООХРАНИТЕЛЬНЫХ ПРОГРАММ В НКР* | 160 |
| *Рубен Заргарян,*<br>*ПОЛИТИКА ВЗАИМНОЙ ПОДДЕРЖКИ АЗЕРБАЙДЖАНА И МЕЖДУНАРОДНОГО ТЕРРОРИЗМА* | 165 |
| *Шаген Абрамян*<br>*РАЗМЫШЛЕНИЯ ПО ПОВОДУ ПРОЦЕССА СОЦИАЛИАЦИИ В НКР* | 170 |
| Алвард Абрамян<br>ИСТОРИКО- ПОЛИТИЧЕСКИЕ АРГУМЕНТЫ СТРОИТЕЛЬСТВА ГОСУДАРСТВЕННОСТИ НКР | 173 |
| *Лариса А. Алавердян*<br>*ЛЕГАЛЬНОСТЬ ОБРАЗОВАНИЯ И ЛЕГИТИМНОСТЬ ВЛАСТИ НАГОРНО-КАРАБАХСКОЙ РЕСПУБЛИКИ (ПОЛИТИКО-ПРАВОВОЕ ОБОСНОВАНИЕ В КОНТЕКСТЕ МЕЖДУНАРОДНОГО ПРАВА И СОВРЕМЕННОЙ КОНЦЕПЦИИ МЕЖДУНАРОДНЫХ ОТНОШЕНИЙ)* | 176 |
| Ваге Давтян<br>*ЭНЕРГЕТИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ КАК СИСТЕМООБРАЗУЮЩИЙ ЭЛЕМЕНТ СТАНОВЛЕНИЯ И РАЗВИТИЯ ГОСУДАРСТВЕННОСТИ В НАГОРНОМ КАРАБАХЕ* | 184 |
| Анна Акопян<br>СВЯЗЬ ВНУТРИНАУЧНЫХ И СОЦИАЛЬНЫХ ЦЕННОСТЕЙ В КОНТЕКСТЕ СОВРЕМЕННОЙ НАУКИ | 187 |
| *Армен Дилан Караян*<br>*АРЦАХ И НАЦИОНАЛИЗМ В ЗАПАДНОЙ ИДЕОЛОГИИ* | 189 |
| *Инал Санакоев*<br>*ГРУЗИНО-ОСЕТИНСКИЙ КОНФЛИКТ КАК КОНФЛИКТ ИДЕНТИЧНОСТЕЙ* | 193 |
| *Малик Телунц*<br>*«КАРАБАКСКИЙ КОНФЛИКТ» ПУТИ И ПРЕДПОСЫЛКИ ЕГО РЕШЕНИЯ: В СВЯЗИ С 25-И ЛЕТНЕГО ЮБИЛЕЯ НЕЗАВИСИМОСТИ НКР И РА И ПРОБЛЕМА СОЗДАНИЯ НАЦИОНАЛЬНОГО ЕДИНСТВА:В СВЕТЕ АПРИЛСКИХ СОБЫТИЙ* | 196 |
| *Мариета Никогосян*<br>*ЭТНИЧЕСКАЯ КУЛЬТУРА КАК ГАРАНТИЯ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ* | 204 |
| *Грайр Пашаян, Лиана Балаян*<br>*РЕФЕРЕНДУМ НЕЗАВИСИМОСТИ НКР В 1991 ГОДА И КОНЦЕПЦИЯ ОТЛОЖЕННОГО РЕФЕРЕНДУМА В ПРОЦЕССЕ КАРАБАХСКОГО РЕГУЛИРОВАНИЯ* | 211 |
| *Александр Манасян*<br>*ИСТОРИЯ И ПРАВО В ПЕРЕГОВОРНЫХ ПРОЦЕССАХ КАРАБАХСКОГО КОНФЛИКТА* | 216 |
| *Арман Навасардян*<br>*ДИПЛОМАТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ АРМЕНИИ И НКР В СОВРЕМЕННЫХ МЕЖДУНАРОДНЫХ ОТНОШЕНИЯХ* | 221 |
| *Наира Согомонян*<br>*ВОПРОС О СУЩНОСТИ ЧЕЛОВЕКА— ОДНА ИЗ ОСНОВНЫХ ПРОБЛЕМ ФИЛОСОФИИ ЭКЗИСТЕНЦИОНАЛИЗМА* | 226 |
| *Армине Арзуманян*<br>*ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ РЕЧИ НА ОСНОВЕ ИЗУЧЕНИИ БУКВАРЯ* | 229 |
| *Карине Аванесян*<br>*ПРЕДЛОГ ի(յ) В ПРОИЗВЕДЕНИИ ЕГИШЭ « Վասն Վարդանայ...»* | 235 |
| *Офелия Бабаян*<br>*ЗАПАДНОАРМЯНСКИЙ: СТАРЫЕ И НОВЫЕ ПРОБЛЕМЫ* | 239 |
| *Сильва Минасян*<br>*ЭТИМОЛОГИЯ СЛОВ АРЦАХ, КАРАБАХ И ИХ СТИЛИСТИЧЕСКОЕ ПРИМЕНЕНИЕ В ПОЭЗИИ ОВАНЕСА ШИРАЗА* | 242 |
| *Шогер Минасян*<br>*ВЫРАЖЕНИЕ ЭКСПРЕССИВНЫХ ЯЗЫКОВЫХ СРЕДСТВ ВО ФРАЗЕОЛОГИЗМАХ КАРАБАХСКОГО ДИАЛЕКТА* | 246 |
| *Женя Погосян*<br>*СТИЛИСТИЧЕСКОЕ ПРИМИНЕНИЕ НЕКОТОРЫХ ЗАИМСТВОВАНИЙ НА ХАЧЕНСКОМ ГОВОРЕ* | 251 |
| *Армен Саркисян*<br>*ИССЛЕДОВАНИЕ ЭТНОГРАФИИ АРЦАХА В ГОДЫ НЕЗАВИСИМОСТИ* | 255 |

| | |
|---|---|
| *Шушаник Сагиян*<br>*СОСТАВНЫЕ СЛОВА ИЗ СЛОВООБРАЗУЮЩЕЙ ОСНОВЫ «АРЦАХ» В ЛИТЕРАТУРНОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ* | 260 |
| *Нуне Хачатрян*<br>НЕКОТОРЫЕ ПРОЯВЛЕНИЯ САТИРЫ В ПОЭМЕ О. ШИРАЗА "ТОНДРАКИЙЦЫ" | 263 |
| *Асмик Газарян*<br>*СОПОСТАВИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ КАТЕГОРИИ ЧИСЛА СУЩЕСТВИТЕЛЬНОГО В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ, РУССКОМ И АНГЛИЙСКОМ ЯЗЫКАХ* | 267 |
| *Цовинар Асратян*<br>ИЗОБРАЗИТЕЛЬНЫЕ СРЕДСТВА КАК СРЕДСТВО ОБОГАЩЕНИЯ ЛЕКСИКИ (СЛОВАРНОГО ЗАПАСА) | 272 |
| *Мира Ярамишян*<br>*ТЕМА ГЕНОЦИДА В УЧЕБНИКЕ «МАЙРЕНИ» ДЛЯ НАЧАЛЬНОЙ ШКОЛЫ* | 276 |
| *Рена Мовсесян*<br>*СЕМАНТИЧЕСКИЕ ДИАЛЕКТИЗМЫ В ПРОИЗВЕДЕНИЯХ АРЦАХСКИХ ПИСАТЕЛЕЙ* | 279 |

CONTENTS

*Hrant Abrahamyan*
*TRAGEDY OF SHUSHI IN 1988* 3

*Hasmik Amirjanyan*
*THE AGREEMENTS BETWEEN ARCHBISHOP HOVSEP ARGHUTYAN AND THE RUSSIAN FIGURES FOR THE LIBERATION OF ARTSAKH (THE END OF THE 18th CENTURY)* 6

*Andrey Areshev*
*THE MECHANISMS OF CONTAINMENT IN NAGORNO-KARABAKH ON THE BACKGROUND OF REGIONAL INSTABILITY* 11

*Iskuhi Avanessyan*
*THE WOMEN'S ACTIVITY IN PUBLIC- BENEVOLENT ORGANIZATIONS AND UNIONS IN ARTSAKH NATIONAL LIBERATIONAL STRUGGLE (1988-1994)* 15

Sergey Hakhverdyan Gayane Shabunts
*SPECIFY ING THE LOCATION OF MARGADZOR VILLAGE AND THE IDENTITY OF SYUNIK'S WOMAN WHO BUILT A CHURCH IN THAT VILLAGE* 19

*V. Balayan*
*THE INVASIONS OF AGHA MUHAMMAD KHAN TO SHUSHI IN 1795 AND IN 1797 AND THEIR CONSEQUENCES* 22

*Nelly E.Baghdasaryan*
*THE MANIFESTATION OF EXTERNAL BALANCES AT THE NEW STAGE OF ESCALATION OF THE AZERBAIJANI-KARABAKH CONFLICT/APRIL-JULY 2016/* 28

*Eduard Danielyan*
*PAN-ARMENIAN CIVILIZATIONAL ACTIVITIES OF THE GREAT PRINCE OF ARTSAKH HAYKAZUN HASAN-JALAL DOLA* 34

*Vladimir Yevseev*
*ON SOME APPROACHES TO THE SETTLEMENT OF THE NAGORNO-KARABAKH CONFLICT (THE MILITARY EXPERT OPINION)* 39

*Aslan Gabelaya*
*ABKHAZIA IN THE FOCUS OF ATTENTION OF POWERS: THE HISTORY AND CURRENT STATE* 43

*Inesa Karapetyan, Armine Gabrielyan*
*IMPORTED CERAMICS OF TIGRANAKERT IN ARTSAKH* 46

*Taron Hakobyan*
*THE BEGINNING AND FEATURES OF STATE BUILDING IN THE NAGORNO-KARABAKH REPUBLIC (January-April of 1992)* 52

*Hayk Hakobyan*
*KHORANASHAT MONASTERY AS BRIGHT WITNESS OF ARTSAKH'S RELIGIOUS-POLITICAL AND CULTURAL LIFE (ON THE BASIS OF NEWLY DISCOVERED MANUSCRIPTS AND LAPIDARY INSCRIPTIONS)* 56

*Lyuba Kirakosyan*
*DEFENSE SYSTEM OF TIGRANAKERT OF ARTSAKH IN THE CONTEXT OF HELLENISTIC ARCHITECTURE* 61

*Alexander Krylov*
*THE FIRST DECADE OF THE NKR: PECULIARITIES OF ECONOMIC DEVELOPMENT* 67

*Marine Harutyunyan*
*THE DEVELOPMENT OF SOME BRANCHES OF SCIENCE IN ARTSAKH IN THE SECOND HALF OF THE 17TH CENTURY AND AT BEGINNING OF THE 18TH CENTURY* 70

*Arsen Meliq-Shakhnazarov*
*THE AUGUST 1991 PUTSCH AND NKR INDEPENDENCE* 76

*Edik Minasyan*
*INDEPENDENCE OF ARTSAKH, CONTEMPORARY STATE AND OBJECTIVES OF STUDYING THE HISTORY OF LIBERATION FIGHT, PROCLAIM AND PROCLAIM AND FORMATION OF STATEHOOD* 81

*Arevik V.Petrosyan*
*MODERNIZATION THEORY: FACTORS IMPEDING THE MODERNIZATION PROCESS IN NKR* 90

*Hamlet Petrosyan*
*TIGRANAKERT OF ARTSAKH AND THE RELIGIOUS REFORMS OF VACHAGAN THE PIOUS* 96

*Vladimir Ponomarev*
*GLORIOUS BATTLE PATH OF OUTSTANDING NATIONAL MILITARY LEADER FROM ARZAKH: RANK-AND-FILE TO MARSHAL* 110

*Mher Kumunts , Zohrab Rkoyan*
*BRIDGE KARAVAZ (KHUDAVERIN) AND ITS HISTORICAL TERRITORY* 113

*V. A. Safaryan*
*REGARDING THE ISSUE OF ARTSAKH'S HISTORY FALSIFICATION* 121

*Nouneh Saroumyan*
*ARTSAKH MOVEMENT AS A MANIFESTATION OF NATIONAL AWAKENING* 125

*Karina Sepyan*
*THE ROOTS OF THE NAGORNO KARABAGH CONFLICT* 132

*Gevorg Stepanyan*
*THE ROLE OF ARTSAKH ARMENIANS IN THE DEVELOPMENT OF OIL INDUSTRY OF BAKU AT THE END OF THE 19TH AND AT THE BEGINNING OF THE 20TH CENTURIES* 137

*Taymuraz Tadtayev*
*TRAGIC EVENTS IN SOUTH OSETIA OF 1920* 142

*Malik Telunts*
*THE LIBERATION MOVEMENT OF 1722 TO 1730 IN SYUNIK AND ARTSAKH AND RUSSIA. THE TERRITORIES* 149

*AND LOCAL AUTHORITIES OF ARTSAKH AND SYUNIK*

*Tatiana Vardanesova*
*THE MEDIEVAL GLAZED CERAMICS OF THE IX-XIII CENTURIES FROM THE EXCAVATIONS OF TIGRANAKERT IN ARTSAKH* 153

*Ararat Vardanyan*
*THE CONTRIBUTION OF THE BENEVOLENT ORGANIZATIONS AND ARMENIAN BENEFICIARIES FROM THE DIASPORA TO THE HEALTH PROJECTS REALIZATION IN THE NKR* 160

*Ruben Zargharyan*
*THE POLICY OF MUTUAL SUPPORT OF AZERBAIJAN AND INTERNATIONAL TERRORISM* 165

*Shahen Abrahamyan*
*CONTEMPLATIONS ON THE PROCESS OF SOCIALIZATION IN THE NKR* 170

Alvard *Abrahamyan*
*HISTORICAL AND POLITICAL ARGUMENTS OF THE STATEHOOD BUILDING IN THE NKR* 173

Larisa Alaverdyan
*THE LEGALITY OF THE FORMATION AND THE LEGITIMACY OF POWER OF NAGORNO KARABAGH REPUBLIC (POLITICAL-LEGAL GROUNDING IN THE CONTEXT OF INTERNATIONAL LAW AND THE CONTEMPORARY CONCEPTION OF INTERNATIONAL RELATIONS)* 176

*Vahe Davtyan*
*ENERGY SECURITY AS A BACKBONE ELEMENT OF FORMATION AND DEVELOPMENT OF STATEHOOD IN NAGORNO KARABAKH* 184

Anna Hakobyan
*THE LINK BETWEEN INTRA-SCIENTIFIC AND SOCIAL VALUES IN THE CONTEXT OF THE CONTEMPORARY SCIENCE* 187

*Armen Dylan Karayan*
*ARTSAKH AND NATIONALISM IN WESTERN IDEOLOGY* 189

*Inal Sanakoev*
*THE GEORGIAN-OSSETIAN CONFLICT AS A CONFLICT OF IDENTITIES* 193

*Malik Telunts*
*KARABAGH CONFLICT: ITS SOLUTION AND PREREQUISITES IN THE EVE OF THE 25TH ANNIVERSARY OF INDEPENDENCE OF THE REPUBLIC OF NAGORNO-KARABAGH AND REPUBLIC OF ARMENIA AS WELL AS THE MAIN ISSUE OF THE CREATION OF A NATIONAL UNITY WITHIN THE FRAME OF APRIL EVENTS* 196

*Marieta K. Nikoghosjan*
*ETHNIC CULTURE AS NATIONAL SECURITY GUARANTEE* 204

*Hrayr Pashayan, Liana Balayan*
*□ĀE REFERENDUM OF THE NKR INDEPENDENCE IN THE 1991 AND THE CONCEPTION OF THE REFERENDUM IN THE PROCESS OF THE SETTLEMENT OF KARABAKH CONFLICT* 211

*Alexander Manasyan*
*HISTORY AND LAW IN KARABAKH CONFLICT NEGOTIATION PROCESS* 216

*Arman Navasardyan*
ARMENIAN AND NKR PROBLEMS OF FOREIGN POLICY AND DIPLOMACY IN PRESENT INTERNATOINAL RELATIONS 221

*Naira Soghomonyan*
*THE QUESTION OF BEINGNESS AS THE MAIN PROBLEM OF PHILOSOPHY OF EXISTENTIALISM* 226

*Armine Arzoumanyan*
*PROBLEMS OF SPEECH DEVELOPMENT ON THE BASIS OF RESEARCH OF THE PRIMER BOOK* 229

*H.K. Avanesyan*
*THE USE OF PREPOSITION I(J) IN EGHISHE'S " VASN VARDANAJ...."* 235

*O. Babayan*
*WESTERN ARMENIAN: OLD AND NEW PROBLEMS* 239

*Silva Minasyan*
*THE ETYMOLOGY OF WORDS ARTSAKH, KARABAKH AND THEIR USAGE IN THE POETRY OF H. SHIRAZ* 242

*Sh. Minasyan*
*OCCURRENCE OF LINGUISTIC EXPRESSIVE MEANS IN THE IDIOMS OF THE KARABAGH DIALECT* 246

*Zhenya Poghosyan*
*STYLISTIC USAGE OF SOME BORROWINGS IN KHACHEN DIALECT* 251

*Armen Sargsyan*
*THE STUDY OF ARTSAKH ETHNOGRAPHY DURING THE YEARS OF INDEPENDENCE* 255

*Shushanik Saghyan*
*COMPOUND WORDS WITH STEM OF DERIVATION «ARTSAKH» IN THE LITERARY ARMENIAN* 260

*Khachatryan N. G.*
*SOME FORMS OF SATIRE IN H. SHIRAZ'S POEM "TONDRAKIANS"* 263

*Hasmik Ghazaryan*
*COMPARATIVE STUDY OF THE CATEGORY OF NUMBER OF THE NOUN IN MODERN ARMENIAN, RUSSIAN AND ENGLISH* 267

*Tsovinar Asratyan*
*EXPRESSIVE MEANS AS MEANS ENRICHMENT OF LEXICON* 272

*Mira Yaramishyan*
*ARMENIAN GENOCIDE IN «MAYRENI» TEXTBOOK OF JUNIOR SCHOOL* 276

*Rena Movsesyan*
*SEMANTIC DIALECTISMS IN THE WORKS OF ARTSAKH WRITERS* 279

# ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ԳԻՏԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
(հոդվածների ժողովածու)

# SCIENTIFIC READINGS
**(collection of articles)**

# НАУЧНЫЕ ЧТЕНИЯ
**(сборник статей)**

*Տեխնիկական խմբագիր՝ Ռ. Հովսեփյան*

Հանձնված է շարվածքի՝ 25.10.2016թ.: Ստորագրված է տպագրության՝ 14.12.2016թ.: Թուղթը օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ; Ծավալը, 36,25 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 100:

Հիմնադիր՝ Արցախի պետական համալսարան, Ստեփանակերտ, Մ. Գոշի փ. 5
հեռ. (047) 94-04-91, ֆաքս (047) 97-12-14
E-mail: rector@asu.am
ԱրՊՀ հրատարակչություն՝ հեռ. (097) 34-01-86,
e-mail printery.asu@mail.ru

Основатель – Арцахский государственный университет г.Степанакерт, ул.Мхитара Гоша 5,
тел. (047) 94-04-91, факс (0479) 7-12-14
Издательство АрГУ: тел. (097) 34-01-86

Founder - Artsakh State University, 5 Mkhitar Gosh st., Stepanakert
Tel.: (047) 94-04-91, Fax: (0479) 7-12-14
ASU Publishing house: tel. (097) 34-01-86

ԳԻՏԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ